

Ֆիզիկական անձանց վարկավորման պայմաններ

Խմբագրություն 47

Ուժի մեջ է՝ 01.02.2022թ-ից

5.2 Գույքով չապահովված սպառողական վարկ***

Նպատակ	Նպատակ	Ֆիզիկական անձանց անձնական/ընտանեկան սպառողական ծախսերի ֆինանսավորման նպատակով տրամադրվող վարկ
Հաճախորդի անձնական տվյալներ	Հաճախորդի (համավարկատուի/երաշխավորի) տարիք	<p>18-65 տարեկան, պայմանով, որ վարկային պայմանագրի ժամկետի ավարտին վարկատուի տարիքը չի գերազանցի 65 տարեկանը, գերազանցելու դեպքում վարկը տրամադրվում է համավարկատուի/երաշխավորի առկայությամբ, այս դեպքում որպես ընդունելի տարիք նույնպես ընդունվում է 18-65 տարեկանը, պայմանով, որ պայմանագրի ժամկետի ավարտին համավարկատուի/երաշխավորի տարիքը չի գերազանցի 65 տարեկանը:</p> <p>Եթե վարկի պայմաններով սահմանված է պարտադիր համավարկատուի կամ երաշխավորության պահանջ (բացառությամբ OTI ցուցանիշի հաշվարկում ներառված եկամուտների առնվազն 70% տիրապետող անձանց համավարկատուության կամ երաշխավորությունների), ապա ֆիզիկական անձ երաշխավորի կամ համավարկատուի համար որպես ընդունելի տարիք նույնպես սահմանվում է 18-65 տարեկան, պայմանով, որ պայմանագրի ժամկետի ավարտին համավարկատուի/երաշխավորի տարիքը չի գերազանցի 65 տարեկանը:</p>
	Ռեզիդենտություն	ՀՀ քաղաքացիություն ունեցող և չունեցող ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք
	Ընդհանուր անգրավ պարտավորությունների առավելագույն գումար (ներառյալ այլ բանկերում և վարկային կազմակերպություններում)	<p>Եկամուտի 8 ապատիկը, սակայն Փաստաթղթավորված եկամուտը Ամերիաբանկի միջոցով ստանալու կամ եկամուտը Նորք տեղեկատվա վերլուծական կենտրոնում գրանցված լինելու դեպքում՝ 10 մլն ՀՀ դրամ</p> <p>Փաստաթղթավորված եկամուտը Ամերիաբանկի միջոցով չստանալու դեպքում՝ 6 մլն ՀՀ դրամ</p> <p>Բանկում 6 ամսվա ընթացքում բանկային հաշիվների միջին մնացորդի առկայության դեպքում՝ 6 մլն ՀՀ դրամ</p>
Վարկի պայմաններ**	Արժույթ	ՀՀ դրամ
	Վարկավորման նվազագույն և առավելագույն սահմանաչափ	<p>Նվազագույնը 300,000 ՀՀ դրամ</p> <p>Փաստաթղթավորված եկամուտը Ամերիաբանկի միջոցով ստանալու կամ եկամուտը Նորք տեղեկատվա վերլուծական կենտրոնում գրանցված լինելու դեպքում առավելագույնը 10 մլն ՀՀ դրամ՝</p> <ul style="list-style-type: none"> • Առավելագույնը եկամտի 6-ապատիկ՝ երաշխավորություն չի պահանջվում, • Առավելագույնը 7-ապատիկ՝ առնվազն 1 ֆիզիկական անձի երաշխավորությամբ, • Առավելագույնը եկամտի 8-ապատիկ՝ առնվազն 2 ֆիզիկական անձի երաշխավորությամբ, <p>Փաստաթղթավորված եկամուտը Ամերիաբանկի միջոցով չստանալու դեպքում առավելագույնը 3 մլն ՀՀ դրամ՝</p> <ul style="list-style-type: none"> • Առավելագույնը փաստաթղթավորված եկամտի 4-ապատիկ՝ երաշխավորություն չի պահանջվում, • Առավելագույնը փաստաթղթավորված եկամտի 5-ապատիկ՝ առնվազն 1 ֆիզիկական անձի երաշխավորությամբ, • Առավելագույնը փաստաթղթավորված եկամտի 6-ապատիկ՝ առնվազն 2 ֆիզիկական անձի երաշխավորությամբ, <p>Բանկում 6 ամսվա ընթացքում բանկային հաշիվների միջին մնացորդի առկայության դեպքում՝ 6 ամսվա միջին և վերջին ամսվա միջին նվազագույնը, մինչև 3 մլն ՀՀ դրամ • • Առավելագույնը մնացորդի 4-ապատիկ՝ երաշխավորություն չի պահանջվում,</p> <p>Առավելագույնը մնացորդի 5-ապատիկ՝ առնվազն 1 ֆիզիկական անձի երաշխավորությամբ,</p> <p>• Առավելագույնը մնացորդի 6-ապատիկ՝ առնվազն 2 ֆիզիկական անձի երաշխավորությամբ, • Հաշիվների միջին մնացորդի պետք է լինի նվազագույնը 100,000 ՀՀ դրամ և կիրառելի է նվազագույնը 3 ամսվա հաշվետեր հաճախորդների դեպքում, ավանդի առկայության դեպքում բացառելով ավանդի գումարի կրկնակի հաշվառումը</p> <p>Ամերիաբանկի միջոցով անշարժ գույքի ձեռք բերման, վերանորոգման և կառուցապատման վարկ ստացած հաճախորդներին առանց վարկունակության ցուցանիշների և փաստաթղթավորված եկամտի պատիվների հաշվարկի կարող է հաստատվել առավելագույնը****</p> <p>Մինչև 10 մլն ՀՀ դրամով հիփոթեքային վարկի դեպքում՝ 500 հազ ՀՀ դրամ 10-25 մլն ՀՀ դրամով հիփոթեքային վարկի դեպքում՝ 1 մլն ՀՀ դրամ 25-35 մլն ՀՀ դրամով հիփոթեքային վարկի դեպքում՝ 1.5 մլն ՀՀ դրամ 35-ից ավել մլն ՀՀ դրամով հիփոթեքային վարկի դեպքում՝ 2 մլն ՀՀ դրամ:</p>
	Ժամկետ (ամիս)	60 ամիս
	Տարեկան տոկոսադրույք	<p>Հաստատուն</p> <p>20%</p>
	Տոկոսադրույքի հետ կապված այլ պայմաններ	<p>Վարկի մարումների դիֆերենցված և խառը եղանակն ընտրելիս տոկոսադրույքը սահմանվում է +0.5%:</p> <p>Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված վճարունակության չափանիշներից (հայտարարագրված եկամտի գծով սահմանված չափանիշների, OTI և OSM ցուցանիշներից որևէ մեկի կամ դրանց ցանկացած համադրության) շեղման պարագայում տոկոսադրույքը սահմանվում է +0.25%:</p>
	Փաստացի տոկոսադրույք***	Այլ շեղումների դեպքում կարող է կիրառվել ավելի բարձր տոկոսադրույք +0.25%: 22.2-23.09%

	Վարկի տրամադրման վճար	Վարկի գումարի 0.5%, նվազագույնը՝ 20,000 ՀՀ դրամ/1 մլն ՀՀ դրամը չգերազանցող վարկերի դեպքում 5,000 ՀՀ դրամ* * կիրառելի չէ առցանց դիմումների դեպքում
	Վարկատուի կողմից վարկի գումարի կանխիկացում	Անվճար
Վարկի մարման եղանակներ	Մարման եղանակ	Անուիտետային (վարկի գումարի և տոկոսագումարի հանրագումարը վճարվում է հավասարաչափ ամսական պարբերականությամբ)
		Դիֆերենցված (վարկի գումարը վճարվում է հավասարաչափ, տոկոսագումարը նվազում է՝ հաշվարկվելով մնացորդի նկատմամբ, վարկի գումարի և տոկոսագումարի մարումները կատարվում են ամսական պարբերականությամբ)
		Խառը (հաճախորդը հնարավորություն ունի ընտրել անհատական մարումների նախընտրելի ժամանակացույց, որի հիմքում ընկած կլինի հաճախորդի ֆինանսական հոսքերի դիմամիկան, սակայն այնպես, որ յուրաքանչյուր տարվա ընթացքում վճարվող մայր գումարը հավասար լինի առնվազն վարկի պայմանագրային գումարի 20%-ին, տոկոսագումարը վճարվում է ամսական պարբերականությամբ)
Ապահովություն	Երաշխավորություն	Երաշխավոր(ներ)ի փաստաթղթավորված եկամուտը պետք է կազմի վարկատուի եկամտի առնվազն 50%-ը, ինչպես նաև Երաշխավոր(ներ)ի վարկային պատմությունը պետք է բավարարի կանաչ սցենարի չափանիշներին
Պահանջվող փաստաթղթեր	Պահանջվող փաստաթղթեր	Վարկային հայտը լրացնելիս պահանջվող փաստաթղթեր.
		• Վարկի հայտ-դիմում
		• Անձը հաստատող փաստաթղթեր (բնօրինակը)
		Նախնական հաստատումից հետո պահանջվող փաստաթղթեր.
		• Տեղեկանք աշխատավարձի վերաբերյալ և/կամ եկամուտը հավաստող այլ փաստաթղթեր
		• Այլ փաստաթղթեր՝ Բանկի մասնագետի պահանջով
	Տույժեր և տուգանքներ ժամկետանց մայր գումարի և տոկոսի նկատմամբ	Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակում է Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը: Տույժ՝ ժամկետանց Վարկի և տոկոսագումարի 0.13 %-ի չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար:

***Փաստացի տոկոսադրույքի մեծությունը/արժեքը կարող է վերը նշվածից տարբերվել, եթե առկա են հետևյալ գործոնները կամ դրանցից որևէ մեկը.

-Վարկի մարումների դիֆերենցված կամ խառը եղանակն ընտրելու դեպքում

-Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված վճարունակության չափանիշներից շեղման դեպքում

-Այլ շեղումների դեպքում

*** Սքորինգ համակարգով կամ տնտեսության որոշ ոլորտների աշխատակիցների համար սահմանված հատուկ վարկավորման պայմաններով հայտը դիտարկելու դեպքում կարող են կիրառվել այլ պայմաններ, ներառյալ անվանական տոկոսադրույք որը կարող է սահմանվել 13% - 21%, փաստացի տոկոսադրույքը՝ 13.79-23.72% ինչպես նաև տրամադրման վճար՝ վարկի գումարի 1%-ի չափով, առավելագույնը 10,000 ՀՀ դրամ, ինչը կիրառվում է վարկի հայտը Բանկի գրասենյակներում ներկայացնելու դեպքում:

****Վարկը հաստատվում է անշարժ գույզի ձեռք բերման, վերանորոգման և կառուցապատման վարկի հաստատման համապատասխան իրավասություն ունեցող անձի կողմից: